Ծուշանիկ Կուրղինյան

Մենք էլ միանանք

Էս փո՛ւճ աշխրքի դարդն ու բալեն
Հերի՛ք մեր ուսին իւր բեռը շարէ.
Աղի արցունքն էլ անդադար լալէն
Հերի՛ք աչերիս ցոլքերը մարէ:

Էս բիրտ օրէնքին հերի՛ք ղուլ-ղուրպան
Էղնին մեր գարնան ալ կանաչ օրեր,
Ու չորս պատի մէջ մոռցուած, անպաշտպան
Հերի՛ք մեր դիմաց փակեն բաց դռներ:

Ա՛րի, քուրիկ ջան, ձեն տանք աշխրքին,
Մեր ընկերներին թէզ ոտքի հանենք.
Էս սեւ, դարաքաշ, անվայել կեանքին
Մի ելք, մի ուղիղ ճամփայ բաց անենք:

Ա՛րի, քուրիկ ջա՜ն, մենք էլ միանանք,
Էն մենծ, սուրբ կռուին էղնինք մասնակից.
Հերիք շղթայուած ու գերի մնանք
Դուման մտքերով, շշմած զրկանքից:

Թող էն բախտաւոր մեր տղամարդիկ
Շատ չհպըրտնան, որ առաջ անցան,
Էնոնք առանց մեզ, հաւատա՛, քուրիկ,

Թէզ տեղ չե՛ն հասնի - կ՛ընկնեն ցիրուցան . . .

Էրթա՛նք, քուրի՛կ ջան, անվախ, միասին
Մեր արդար դատին զոհած ամէն բան.
Էն ազատ կեանքի սրբազան լուսին
Ամէնքն են հաւասար՝ կռուողը արժան . . .

Հուլիս 2, 1907